


Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2005թ. «~~11~~ 12»-ի
N ~~154-4~~ հրամանով

Նախարար  Դ. Լոբջան



Տպագրված է ընդամենը 6 օրինակ
Օրինակ ----- 4 -----

Գրանցված է Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Արաբկիրի տարածքային բաժնի կողմից
« 20 » - 09 ----- 2005թ.

Գրանցման թիվ 264-210-0729,
Վկայական 03Ա. 069690

Արաբկիրի Տ/Բ պետ
Ս. Հովհաննիսյան
0905թ



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ՍԵՐՄԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՆՏԻՑԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության 2005 թվականի փետրվարի 24-ի N 265-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1275-Ն որոշմամբ:

3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

4. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության պետական գինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն, ռուսերեն, անգլերեն ան-

վանձամբ կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

5. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

6. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփական գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ “Сермеру горцакалутюн” государственная не коммерческая организация

ռուսերեն կրճատ՝ ГНКО

անգլերեն լրիվ՝ «Sermeri gortsakalutyun» state non commercial organization

անգլերեն կրճատ՝ SNCO

8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մամիկոնյանց 39^ա

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԹՅԱՆ

ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

9. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) սելեկցիոն նվաճումների (բույսերի սորտեր, կենդանիների ցեղեր) փորձաքննությունների իրականացումը,

բ) սելեկցիոն նվաճումների տարբերիչ առանձնահատկության, կայունության, միատարրության և տնտեսական օգտակարության պետական փորձարկումների կազմակերպումը,

գ) սելեկցիոն նվաճումների իրավական պահպանությունը,

դ) սելեկցիոն նվաճումների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության հրապարակումը,

ե) սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանի վարումը, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ հանդիսացող սելեկցիոն նվաճումների հաշվառումը, դրանց վերաբերյալ տեղեկատվական համակարգի ձևավորումը,

զ) սելեկցիոն նվաճումների փորձարկումների և իրավական պահպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացումը,

է) Հայաստանի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի սորտային ցանքերի ապրոբացիայի և սորտային նույնականացման աշխատանքների իրականացումը,

ը) բույսերի սերմերի որակի լաբորատոր փորձարկումների իրականացումը, Հայաստանի Հանրապետության պետական և միջազգային չափորոշիչներով սահմանված ընթացակարգով սերմերի որակի գնահատումը և որակի փաստաթղթերի տրամադրումը:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

10. Կազմակերպությունը՝

ա) Ընդունում է սելեկցիոն նվաճման արտոնագրի խնդրարկման և օգտագործման թույլտվության հայտերը, իրականացնում դրանց փորձաքննությունը և արդյունքների հիման վրա որոշում կայացնում դրանց պաշտոնական հրապարակման, տարբերիչ առանձնահատկության, միատարրության, կայունության և տնտեսական օգտակարության փորձարկումներ նշանակելու կամ դրանք համատեղելու մասին,

բ) կազմակերպում է սելեկցիոն նվաճումների փորձարկումները, անհրաժեշտության դեպքում դրանք համատեղելով կենսաքիմիական և լաբորատոր այլ հետազոտությունների հետ,

գ) փորձաքննության կամ փորձարկման արդյունքների հիման վրա տալիս է սելեկցիոն նվաճման նկարագրությունը,

դ) հրապարակում է սելեկցիոն նվաճման պաշտոնական տեղեկագիրը, վարում սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանը,

ե) Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպում է գյուղատնտեսական մշակաբույսերի սորտային ցանքերի դաշտային հետազոտությունների (ապրոբացիայի) և սորտային նույնականացման աշխատանքներ,

զ) կազմակերպում է բույսերի սերմերի որակի լաբորատոր փորձարկումներ, դրանց արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության սելեկցիոն նվաճումների պետական չափորոշիչների սահմանված ընթացակարգով գնահատում սերմերի ցանքային պիտանիության ցուցանիշները և տալիս որակը հավաստող փաստաթղթեր:

է) պահպանում է իր մոտ եղած բույսերի գենոֆոնդը:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

11. Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակներն են՝

ա) բույսերի նոր սորտերի տարբերիչ առանձնահատկության, կայունության, միատարրության և տնտեսական օգտակարության փորձարկումներ և փորձաքննության իրականացումը,

բ) բնագավառի վերաբերյալ մեթոդական և գիտահետազոտական ուսումնասիրությունների կատարումը,

գ) տնտեսվարող սուբյեկտների պատվերով և նրանց ֆինանսավորմամբ, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմադաշտերի ապրոբացիա, սորտային նույնականացման աշխատանքների կատարումը,

դ) տնտեսվարող սուբյեկտների պատվերով և նրանց ֆինանսավորմամբ, բույսերի սերմերի որակական ցուցանիշների լաբորատոր հետազոտությունները

ե) կանոնադրական խնդիրների իրականացման ընթացքում ստեղծված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը,

զ) վերապատրաստման, ուսուցման և խորհրդատվական աշխատանքների իրականացումը:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

ա) հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

բ) լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը,

գ) գործադիր մարմինը (տնօրենը):

13. Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի վերջնական լուծում տալ կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նրա բացառիկ լիազորություններն են՝

ա) կազմակերպության ստեղծումը,

բ) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

դ) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

14. Լիազորված պետական մարմինը՝

ա) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ,

բ) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) անրացվող պետությանը պատկանող գույքի կազմը,

գ) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

դ) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

ե) ձևավորում է կազմակերպության կառավարման մարմինները, վաղաժամ-կետ դադարեցնում նրանց լիազորությունները.

զ) ստեղծում է մասնաճյուղեր,

է) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության գործունեության նկատմամբ.

ը) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրությունները և ցուցումները,

թ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

ժ) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության անրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ժա) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, ինչպես նաև օրենքով, հիմնադրի որոշմամբ համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

ժբ) հաստատում է կազմակերպության տարեկան նախահաշիվները, հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ժգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

15. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին, օրենսդրությամբ սահմանված կարգով, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:

16. Կազմակերպության տնօրենն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում

պատասխանատվություն Չայաստանի Չանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

17. Լիազորված պետական մարմնի ղեկավարը կազմակերպության տնօրենի գործառույթներ իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր:

18. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից:

19. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառած վնասի համար:

20. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

21. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել վերադաս կառավարման մարմինների Չայաստանի Չանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

22. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում նրան պաշտոնի նշանակած մարմնի որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

23. Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) Չայաստանի Չանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

ե) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

զ) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

է) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ը) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չհակասող և կազմակերպության կառավարման մարմիններին չվերապահված այլ լիազորություններ,

ժ) հաստատում է կազմակերպության մասնաճյուղերի կանոնադրությունները,

Ճա) նշանակում է մասնաճյուղերի ղեկավարներին :

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՍՆԱԾՅՈՒՆԵՐԸ

24. Կազմակերպությունը կարող է ունենալ մասնաճյուղեր: Կազմակերպության մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն, գործում են իրենց կանոնադրություններին համապատասխան:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

25. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող և իր գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

26. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և սույն կառնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

27. Հիմնադիրը, կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

28. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

29. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

30. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ և անհատույց ամրացվում է գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

31. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու և անհատույց օգտագործման հանձնելու:

32. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից վարձակալության հանձնելու: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

33. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

34. Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

35. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանը ամրացնելը չի կարող հիմք հանդիսանալ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

36. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված գույքի կամ պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ պետական կազմակերպության կողմից օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

37. Կազմակերպության շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

38. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

X. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

39. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

40. Կազմակերպությունը պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

XI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

41. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

42. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

43. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:

44. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

45. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

